

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԻՒՍԱՐԱՆ

ԲԱՆՍՄԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅՀԳ-ՌՅՀԳ

Հ Ա Տ Ո Ր

Ձ Ա



1924

Յ Ո Ւ Ն Ի Ս

Թ Ի Ի 6

ԲԱՆՍՄԻՐԱԿԱՆ

Ս Ո Ր Ա Կ Ա Լ

(Շարունակելի տես Բազմազեպ 1924, էջ 161)

ԽՈՌԱՊԵՏՔ Երբայական բնագրի
ԹԷ ԱԽՈՌԱՊԵՏՔ Թարգմանութիւնն այլ
 և այլ լեզուներով, ունի իւր տարբերում-
 ները, յորոց ոմանք որոշ գաղափար Հին
 տար մի ո՞ր և է պաշտօնի մը, այլ բարձր
 դիրքի պատուոյ ակնարկութիւնք են. իսկ
 ոմանք զրական միտք և գաղափար կը
 յայտնեն:

Յոյն ունի.	Որգիք Գաւթի	αὐλάρχαι ἕσαν.
Լատին Վուչատուս	»	Sacerdotes erant.
Գերմանականն	»	Waren priester.
Անգլիականն	»	Chief rulers.
Գաղղկականն	»	Étaient les principaux officiers.
Իտալականն	»	Erano principi.
Հայն՝	»	Խոտապետք էին:

Այս Թարգմանութեանց մէջ մթինն Յոյնն
 և Հայու «խոտապետք»ն են, իսկ անգղիա-
 կանն, գաղղկականն և իտալականն անո-
 րոշ են, այո՞, բայց աստիճանի մը բար-
 ձրութիւնը ցոյց կու տան, ո՞չ բուն պաշտօնը

և զործը: Իսկ լատին Վուչատուսն և անոր
 հետեւող գերման Թարգմանիչն արքայ-
 որդւոց վայել պաշտօնի անուներ կու տան,
 որ էին քահանայք:

Քահանայութիւնն արքունիքի մէջ ամե-
 նաբարձր պաշտօնն էր. ինչպէս նաև եր-
 կրներու բարձրագոյն դասու հրեշտակք,
 քահանայապետութիւն կը կոչուին: Հե-
 թանոս աշխարհի մէջ եւս քրմութիւնն
 ծայրագոյն իշխանութեան և պատուոյ աս-
 տիճանն էր քաղաքական հանդիսադրու-
 թեանց մէջ:

Արգ Դաւթի որդւոց քահանայութիւնն
 կրկին նշանակութիւն ունի մեզ համար.
 Եւ իբրև զո՞ր մատուցանող կամ հաշտա-
 բար, Գ. իբրև դատաւոր կամ իրաւաբար:
 Առաջին իմաստով նոքա իբրև քահա-
 նայք կը վայելէին այն արքայական իրա-
 ւունքներն, որով Սաւուղ, Դաւիթ և Սո-
 դոմոն կը նախագահէին և անձամբ իսկ
 կը մատուցանէին խաղաղական կոչուած

գոհերը, որով հաշտութիւն կը կատարուէր ընդ մէջ ժողովրդեան և Աստուծոյ: Իսկ Որդիք Դաւթի եթէ ոչ Երուսաղէմի կամ աշխարհագումար հանդիսադրութեանց ժամանակ, գոնէ Երուսաղէմէն դուրս երկրորդական ջաղաքներ և տեղեր, նոքա կը նախագահէին կամ կը մատուցանէին ըրումութեան պատկանեալ գործեր, զորս համար Բ. Թագ. Թարգմանիչն չ'աւեր լոկ, խոս այլ խոս—պետք էին, որ Pontifex Maximusին կը համապատասխանէ:

Երկրորդ իմաստով, քահանայք էին նաև դատար: Սա ևս ամենափաստար պաշտոն մ'էր, իբր տեղակալ բարձրագոյն իշխանութեան, պաշտոն մը զոր Մովսէս (ոչ Ահարոն) Յեսու և Դատարը (նաև կին մը Դերովրա) վարեցին, և յետոյ անցաւ Թագաւորական իշխանութեան: Լաւ է յիշել թէ Մովսէս դատավարութեան ատեններն երկուքի բաժնեց. ամենայն բան ծակր իրեն վերապահեց, իսկ թեթև բաներ բաժնեց ենթադատարներու վրայ: Արդ Դաւթի որդիք էին ենթաքահանայք և ենթադատարք իրենց հօր: Դրանք բաներ կը դատուէին Թագաւորական դահլճի մէջ, որ յունական բառով Իագիթիկա կը կոչուէր: Սրահի վերին ծայրն կողակի մէջ դրուած էր բեմն, ուր կը բազմէր Թագաւորն կամ իշխանն զատելու ժողովորդը, իսկ բեմէն դուրս կիսապարսպով կամ ճաղերով գատուած էր, և կը կոչուէր գաւիթ (aula), յորում առաջին հարցուփորձեր կը կատարուէին, կամ առանին հարցեր կը լուծուէին: Թէ Դաւթի որդիք, Խոռապետք, դատար, իրաւարար, մեկնիչ օրինաց եղած են իբր արքայազունք՝ մեզ կ'ուսուցանէ Բ. Թագ. գիրքը ԺԵ. 2: «Եւ կանխէր Արեհագում և կայր առ ձանապարհի դրանև. և լինէր՝ ամենայն այր որոյ էր դատ զալ առ արքայ ի դատաստան, բարբառէր առ նա Արեհագում և ասէր ցնա... ահա բանք քո բարի են և զիրիքն, և որ ունկնդիր լիցի քեզ՝ չիք առ ի յարքայէ: Եւ ասէր Արիստղոմ, ո՞ կացուցանէր զիս ԴԱՏԱԽՈՐ ի վերայ երկրիս, և առ իս զայր ամենայն այր, որոյ էր հակառա-

կուծիւն և դատաստան, և ԱՌԵԼԷԻ ՆՄԱ ԻՐԱՆՈՒՆՍՍ»:

Արիստղոմ իսկապէս «Խոռապետ» էր, բայց այս բաներս խօսած ժամանակ, Դաւթի զրկած էր իւր ունեցած իրաւունքներէն և պաշտօնէն, եղբայրասպանութեան համար, և հսկողութեան տակ էր արքունիքի մէջ: Այնու հանդերձ երեսուտը մարդ էր, կ'երթար ձեռնապարհի դրան մօտ, այսինքն գաւթի կամ հրապարակի մէջ կը մտնէր, ուր ժողովորդն կը հաւաքուէր արքային մօտ դատաստանի: Արեհագում կ'իմացնէ Թունաւորիչ խօսքերով իւր եղբայրներու անհոգութիւնը, և կ'ուզէ զրգոել զանոնք «Խոռապետ»ներու դէմ, ասելով «Որ ունկնդիր լիցի քեզ՝ չիք առ ի յարքայէ»:

Ս. Գիրքը կը բացատրէ այսու «Խոռապետ»ութեան պաշտօնը՝ որ էր արքունեաց նախագաւթի մէջ հաւաքուած ժողովրդեան վերակացութիւնն, հաշտարար դատարի ղերկ կատարողը և մեկնիչը օրէնքի ըստ տեղւոյ: Ապրազայից և անձերու: Եւ միայն վուկատայի sacerdotes, բառի զօրութեամբ կարելի եղաւ, որպէս կարծեմք, փոքր ի շատէ ճշդել «Խոռապետք» բառի պաշտօնական իմաստն, որք էին ՓՈՒՅՆՈՐԻ ԱՐՔԱՅԻՆ: Մինչդեռ յոյն ընագրին նայելով կարելի չ'էր պաշտօնի բարձրութիւնը ցոյց տալ. իսկ վարած պաշտօններն անփաստանակ, քանզի ասլաբաչաւ, «ախոռապետ»ութեան գործն է, որ անարժան էր արքայորդուց: Չայս անդրադարձեր է նոյն ինքն բանասէրն. որով հակասական է «Խոռապետ»էն հետևեցնել և սրբագրել «Սորակալ»ն ի Խոռակալ, քանզի Բիւզանդի «Սորակալ»ն առաջին և հարագատ իմաստովն է «ախոռապետն ասպատաններն արքային Պարսից»: Սակայն այդքան տգիտութիւն վերագրել մեր Ե. դարու ոսկիարան Թարգմանչին՝ աննեքելի է: Նոքա որ աչքի առաջ ունէին նաև ասորի Թարգմանութիւնն համաձայն Երբրայականին, և փոխանակ քսանաւայ կամ դատար Թարգմանելու՝ հետևեր են յոյն օրինակին՝ «Խոռապետք» կոչեր են Դաւթի որդիքը: Եւ չեն սխալեր, եթէ «Խոռ»

բառն ունենայ և այլ տարանջատ նշանակութիւն , զոր յետոյ պիտի տեսնենք : Վասն զի յոյն *αὐλή*, լատին *aula* թէ և առաջին իմաստով հովասուն վայր, գաւիթ ոչխարաց , բակ անասնոց, ցանկապատներէջ, պարսպափակ տեղ նշանակէ, յորում բազմութիւնն անասուններու կը հաւաքուին, սակայն յետոյ ուրեմն նմանութեամբ և փոխաբերաբար անցաւ նշանակելու Տաճարներու միջի թևերու բաժանումներն կամ արքունիքի առջևի Գաւիթն, ցանկապատն, որ կը հաւաքուէին բազմութիւն մը մարդերու աօրեայ կենաց զործերու մասին խօսելու, վիճելու, դատելու և այլն. որով ազոր հսկողութիւնը կամ վարչութիւնը կարեւորագոյն պաշտօններէն մին կը հանդիսանար: Արդարեւ տեսնե՞ք վերջը, ուր «կանխէր Արեսագոմ և կայր առ դրան ձուսպարճիկ» իօսելու և լսելու առ արքայն եկող գանգատաւորները Ուտի յոյն թարգմանիչն աւելի հմուտ զուով երբայակաւ բառի առուձնեբուն , փոխանակ լատին թարգմանչին քսանակաւ ձայնը առնելու, բնագրի արտայայտութիւնն համաձայն գտնելով իւր ազգային գաղափարին *αὐλαρχαί* թարգմաներ է, որ է տիրապետ և փոխարեբական իմաստով և ընդարձակ մտքով, իշխան անձնապահապետ, առաջնորդ և հովիւ. (Եզեկ. 17)՝

Ուտի վարդանանն փոխանակ փորձելու «Մորակալ»ը Դաւիթ որդւոց «Խոնապետ» բառիւ ճշդելու, որ ախոռապետ կը նշանակէ, կրնար ուղղակի կոչուի Հոռմէական *Comes militum* կամ *Stabuli*, որք էին ԱՍՊԱՍՍՆԵՐՈՎ ԵՐԵՐԱԿԱՑՈՐ, պետք և այլն, և պատուաւոր զիրք մ'ու-

նէին բանակի մէջ: Այդ պաշտօնէութիւնն Միջին դարերում բարձրացաւ և տեղ գտաւ ազնուականաց շարքերու մէջ, մուտ գտաւ նաև թագաւորի արքունիքի մէջ, Կիրիկեան Հայ թագաւորութեան շրջանին, արեւմտեայց հետնողութեամբ , արքայեղբարք ԳՈՒՆԴՍԱՊԼ տրտոտով մեծաշուք պերճացած էին. տիրապետ մը որ կը վայելէր նաև Դաւթի խոնապետ որդիներուն: «Եւ որովհետև չեն կրնար իբրամէ տարանջատուիլ ոչ ծագումով և ոչ նշանակութեամբ խոռակալ և խոռապետ», ուրեմն «Սորակալ»ն ասպաստանին Պարսից արքային էր իսկական ԱՌՈՒՊԳԵՏՆ, որոյ յունարէնն է *αὐλαρχαί*, լատիներէնն *Comes Stabuli*, Գաղղիքիէն *Connétable*, Հայեցին՝ Գունդրատալ, ինչպէս հասկացած են մեր դասականներն և գերման գիտնականներն՝

ՍՈՐԱՍԱԼՆ ՈՂ ԷՄԻՆԻ, ԼԱՈՒԷՐԻ, ԱՃԱՆԻ և ոչ իսկ ՎարդաԱՌՈՒՊԳԵՏՆ նեանի աշխատու թիւններն, ըստ մեր սկար զատողութեան, լուսաբանած, մեկնած, ուղղած և ճշդած են «Մորակալ» բառի ուղղագրութիւնն և նշանակութիւնն. ինչո՞ւ. վասն զի բնաւ անոր ծագմանը միտ դրած չեն: ՈՂ ոք կասկածեր է թէ օտար բառ մ'է: Եթէ հայերէն ենթագրուէր, փոխանակ տառերու քմահանոյ փոփոխութեան կոչուելու, պիտի որոնէին թէ անոր կիրառութիւնը մի ո՞ր և է հեղինակի մօտ կը գտնուի: Գիտնականներու հետազօտութեանց մէջ չկայ և Պետերս կ'ըսէ որ անծանօթ բառ մ'է: Եթէ ԱՆԾԱՏՕԹ բառ մ'է, երկու կերպով կարելի է մօտենալ անոր մեկնութեան . ա. Մեր զրացի Պարսից լեզուէն եկամուտ

1. Մեր թարգմանիչ արդօց Ախոռապետք թէ խոնապետք թարգմանած են, տարակուսական է: Չեղելով այլոց կարծեաց՝ խոռապետի հասանականութիւնն յայնմ է որ քուցէ Հայոց թագաւորութեան բաժանումն յետոյ, Պարսից բաժնի մէջ արքայազուն իշխանք խոռապետք կ'ըսուէին, իբրև փառաւորք, գեղեցկէք, իշխանք արքունական ասն. որպէս էին մեր թագաւորաց ժամանակ նախկին խորհուրդներ, զորս կը դրուուէ յոյժ խորհնացին իբրև թագաւորաւորք, Քրիկապետք և վերակացոց ասան արքունի խոռ, ի միջի այլ իմաստք, իբր արեւի

մակդիր, փայլուն և պայծառ իմն ունի: Համեմատական իմն Հոռմէական Երեւակուտի իշխանապետութեան առաջին աստիճանին որք կուուէին *Illustrissimi, Clarissimi*, որով Դաւթի որդեք, յետ արքային խոռապետք էին, Վեճանալքք, Պերճապայծառք:

2. Զարմանալին այն է որ Թիբեթացեան շիփեր է և վարդանանն էն անդարդարձեր թէ «Քերթիթն և (ո) Փելեթիթն»ը Դաւթի որդեք էին, այլ արքայի բանակի երկու ընտիր զուցերը – աղեգաւորք և պարաւորք:

բառերն ի՞նչ տառական փոփոխութեան ենթարկուած և հայերենացած են. զոր օրինակ պարսկական ֆ Հայունս է փոխուած. ֆէրմանն = Հրաման, ֆէրիշէ = Հրեշտակ. կամ Ս և Խ. զոր Բաստ = բախտ, Դուստը = զուխտ և այլն, որով ոչ թէ «աչքատու նմանութիամբ» մը այլ լեզուական կանոններով պիտի բացատրուէր, թէ «Սորակալն» մարթ էր կարգալ «Խոռակալ», ինչ որ մինը ասած էինք. ք. «Խոռակալ» ըստ իւր կարգին կը նշանակէ ախոռապետ, երկուքն ալ պարսկական ծագումով. և մրպէս, կը բացատրենք հետեւեալ կերպով. Ի սկզբանէ Ահառեանն կնքեր էր թէ «ապահովապէս խաթարուած բառ մ'է «Սորակալն»: Իսկ վարդանեանն Դաւթի որդւոց «Խոռապետ» էն ձեռնարկելով ուղղել «Սորակալ» ը «Խոռակալի»՝ նշան է թէ ինքն ալ համարմտ է Ահառեանին: Մինք ընդհակառակն մեկնած էինք այն կէտէն, թէ մեր Դ. և Ե. դարու դասական մատենագիրներուն ընտանի Պարսիկ և Յոյն լեզուներէն, անոնց շարագրածներուն մէջ սպրդեր են յիշեալ ազգերու բառերէն այնպիսի դիւրութեամբ, ինչպէս այսօր մեր խօսակցութեանց և գրութեանց մէջ կը ներհոսին ժամանակակից օտար ազգերու բառերը. որով տարակուսած էինք թէ գուցէ «Սորակալն» պարսկերէնէ և հայերէնէ կազմուած բառ մ'է, ՍՈՐ արմատն մեզ անհասկանալի մնալով. թէպէտ և նկատած էինք որ անընչութիւն մ'ունի, տեղէն և պարագաներէն դատելով, միւս պարսկերէնէ առնուած «ԱՌՈՒՊԵՏ» ի հետ. որով առանց պահանջուած բացատրութեան, հարցականով մը առկախ թողինք հարցը:

Արդ որովհետեւ, մեր կարգին, անբաւարար գտանք, թէ՛ ընկեր Ահառեանի և թէ՛ վարդանեանի տուած լուսարանութիւններն, պիտի փորձենք հարցը պարզել, առանց գրեթե նմանութեան և փոփոխութեան, այլ խուզարկելով ՍՈՐ բառի ստուգարանութիւնը. առ այս զիմեցիւր Սորատ-Ռափայէլեան և քաղաքիս վաստականութեան բարձրագոյն Դպրոցի ա-

բարբրէնի ուսուցիչ Պր. Կարապետ Չորպանեանին և հարցուցիւնք թէ պարսկերէնի մէջ արդեօք կայ ՍՈՐ բառ մը և ի՞նչ կը նշանակուի: Յարգելի ուսուցիչն համեստութեամբ պատասխանեց թէ Սոր բառ մը կայ որ կը նշանակէ, պատ, պարիսպ. ցա. ա. ց՛ք ք. սակայն աւելցոց որ վաս տառը կրնայ արտասանուիլ և օ, Սոր կամ Սուր: Արաբերէնն ալ ունի Սոր որ նոյն նշանակութիւնն ունի, անշուշտ կը կրէ պարսկերէնի ազդեցութիւնն:

Օտարի բառն հայու բերանն կրնար հնչուիլ և գրուիլ սոր և սոր ըստ գաւառաբարբառներուն, համարելով որ ձեռագրական սխալ չէ, Բիւզանդ հետեւեր է Սոր արտաբերութեան և գրած է «ՍՈՐակալ»: Կը յուսամ որ գիտուններն շատ դժուարութիւն պիտի չհանեն Սոր կամ Սոր հնչմանց դէմ, ուստի մեր կազմած գաղափարն բացատրենք հետեւեալ կերպով:

Հայոց Թագաւորներն ալ ունէին իրենց Սորակալ և նոյն Բիւզանդն է գրողը. Երազմակ կը պատմէ Գնէլի համար թէ «Արի գնացի Գնէլ, տարայ մինչև յորմ Սիւսին (Սիւրին?) սպանի և անդէն թաղեցի»: Թէ ի՞նչ է այդ Սիւսին կոչուածն. Բիւզանդ այլ կրկնութեան մէջ լաւագոյն կը բացատրէ հայեցի բառերով. «Իսկ զպատանին Գնէլ առնուին գնային մօտ ի Սիւսն արքունի, և անդէն կառափէին... մօտ յորմաստ արգելոյացև որսոցև երիտցև». որ է ընդարձակ կալուածք մը որով շրջապատուած, զոր լցեր են ձիերով, շներով, որսական երէնիքով և այլն: Նոյնպէս խորով մայրիներ տնկելու, պարսպելու և որսի անասուններ լեցնելու աշխատութիւնքն աւարտելէն վերջ, հարկաւ մեղակացու մը եւս նշանակած է: «Եւ անդ շինեցին զապարանսն արքունականս, և զբերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին... և ապա զամենայն երէս և զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն, և ըսու զԲԱՂԱԳՈՐԲՄՍՆ»: Որով «որմածս արգելոյաց» ի, «պարսպեալ փակեցին» ի և «Վաղաքորմ» ի վարիչն կամ խնամակալն, առանց վիրաւորուելու կրնան կոչել

ինքզինքնին ՍՈՐԱԿԱԼ կամ ԱՌՈՒԱՊԵՏ ասպատանին արքային Հայոց:

Ուրիմն ՍՈՐԱԿԱԼն կը նշանակէ Պատնէշպակ, պարսպպակ շինի, տեղւոյ կառավարիչը, այսպէս էր Պարսից արքայի ասպաստանն, ձիանոցները, ախոռները, քաղաքորմի, Ձուարակափակ տեղւոյ մէջ ամփոփուած, որու վարիչն է ՍՈՐԱԿԱԼն, նոյն և զլուխ ու վերակացու տանը, աւանին ԱՌՈՒԱՊԵՏԸ:

*
**

ԵԱՆՆՈՒՐԱՊԵՏ ԿԱՄՎ արդանեանը կը ԱՐՔՈՒՆԻ ԴՊՐԱՊԵՏ գրէ. «Խոտապետ» բառը կը թուի թէ կայ նաև Եղիշէի մօտ, աւելի անորոշ նշանակութեամբ՝ շահ՝ Խոտապետ արքունի: Ասով արդէն կը խոստովանի թէ իւր տուած բացատրութիւնն ալ տևորոշ է և կը մնայ: Ուստի մեզ լսել կու տայ Փորթուզալ փաշայի ծանօթագրութիւնն, առանց խորհրդածութեան, որ իւր պաշտպանած խնդրոյն օգուտ մը չունի: Քանզի Փորթուզալեանն Շահ՝ Խոտապետի վրայէն թռչելով կ'անցնի, որովհետև իւրին « ուղիղ չի հետևիր բաժնել զանունդ յերկուս » և կը շարունակէ՝ « բայց Ինչ էր Շահոտապետին պաշտօնը . հաւանօրէն շահր և պետ բառերու բարդութիւն մ'է և կը նշանակէ քաղաքպետ: Եւ թէպէտ նոյն Գահնամակին մէջ կը տեսնենք և առանձին քաղաքպետը, այսու ամենայնիւ մարթ է կարծել թէ Շահխոտապետն արքունի թագաւորանիստ քաղաքի իշխանն էր և նոյն ընդ քաղաքպետին արքունի, ու վրամայ Գահնամակին քաղաքպետըն, միւս մեծամեծ քաղաքաց իշխանն էին »:

Փորթուզալ փաշայի ծանօթագրութիւնն թէև զիտուոր, բայց իրականութենէ հետո կը թուի: Նախ որ շահր և պետ բառերու բարդութենէն զուրա թողած է խոս բառը, թէև Շահխոտապետ արքունի զուրցուածքը կ'ընդունի, որպէս զի հա-

մաձայնեցնէ ընդ Գահնամակի «քաղաքպետն արքունի»ի հետ. միտ չընկելով որ այդ երկու բառերն այլ և այլ ժամանակի և տարբեր պատմական հանգամանքներու մէջ ծնունդ առած են, զոր ի ստորև պիտի բացատրենք: Բայց նախ լսենք նաև Հ. Ալիշանի ձայնը, որ հմտագոյնն է մեր Նախարարական բարձրու և Գահնամակաց ընագիրներու ուսումնասիրութեան ըստ մեր տոհմային պատմագիրներուն, և ազդեր է իւր աշակերտի վրայ: Արդ նա « ԱՅՐԱՊԵՏ »ի 425 էջի մէջ գրում է. «ՔԱՂԱՔԱՊԵՏՆ ԱՐՔՈՒՆԻ, ըստ վրամական Գահնամակին . ՔԱՂԱՔԱՊԵՏՔ ըստ Ներսիսեանն. առաջնովն մարթ է իմանալ զվերակացուս թագաւորական քաղաքին, երկրորդան՝ զայլոց զխաւոր քաղաքացի »:

Հ. Ալիշանի խօսքերէն հասկանալի է որ այս Գահնամակներու վաւերացման ժամանակ գոյութիւն չունէր մի իշխանական բարձ՝ Շահխոտապետ կոչումով. սակայն կը համարի թէ Շահ՝ ախոտապետ մ'եղած լինի, և զայն կը դասէ ի շարք երկրորդական և երրորդական պաշտօնակալութեանց, որպիսիք էին « Չեզոքուցանողը », « Սպասարարը » « Կուտապանը »... և սոցա զործակիցք են Շահ-ախոտապետը և ոմանք յատուկ անուն ընթեանուն և գրեն Շահ՝ Խոտապետը »:

Սակայն ոչ Փորթուզալեանի լուսարանութիւնն և ոչ Հ. Ալիշանի դասաւորութիւնն բաւական են ճշդիլու «Շահխոտապետ»ի զիրքը, որովհետև հայ թագաւորութեան ծառայած չէ:

Արդ Քաղաքպետութեան և Շահխոտապետութեան տարբերութիւնը հասկանալու համար, պէտք է մի քանի զարյառ զնալ: Յայտնի է Հոսմէական պատմութենէն և յատկապէս Տախտոսի Տաբեզորութիւններէն թէ Հայ թագաւորը և ազնուականը Քրիստոսի առաջին դարէն Հոսմ կ'ուղարկէին կրթուելու իրենց որւղիքը, երիտասարդութիւնն, որոնք Հայաս-

1. Քննադատ. Եղ. Պատ. էջ 392.

2. Աբբա. Անդ. էջ 419.

տան վերադառնալով, հոռոմէական կարգերն սկսան մուծանել Հայ արքունիքում, և նախարարական տներու մէջ, յորմէ ոչ սակաւ կորուսեցին եղած են պարսկականերն երու կողմէն: Հոռոմէասէր Արշակունի թագաւորներ, ինչպէս էին Տիրան, Արշակ Բ. Խոսրով վերջին, նոքա Գահնամակներ պատրաստած ժամանակ, հաստատած են անկասկած Նոր Նախարարութիւն մը, ոչ տոհմական, այլ պաշտօնական «ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐՔՈՒՆԻ»ի՝ անունով, որ վառական Գահնամակի մէջ կ'է, ըստ նմանութեան Հոռոմի Praefectus Urbisի, որ մի միայն մայրաքաղաքի ներքին վարչութեան գործերով կը զբաղէր: Ուստի Հայ քաղաքացիներ պաշտօնի լրիւ գաղափարն ունենալու համար, հարկաւոր է ուսումնասիրել Հոռոմէական կարգերը և հաստատութիւնները:

Բայց երբ վերջացաւ Արշակունեաց թագաւորութիւնը, մեր աշխարհի կարգերը մեծ կերպարանափոխութիւն կրեցին, վկայ են Եղիշէ և Փարպեցին, հետեւապէս չկար արքունիք, չկար թագաւորանիստ աթոռ, չէր կարող լինել ուրեմն և ՔԱՂԱՔԱՊԵՏ ԱՐՔՈՒՆԻ: Եղիշէ կը գրէ թէ Պարսիկը Արշակունի ազգն ջնջելէ յետոյ «ի Նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն»: Սակայն եթէ հարցանես եթէ ի՞նչ էր այդ թագաւորութիւնն, այն էր որ թէ՛ և ամէն բան կորսնցուցած, « սակայն այրուածին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առջնորդէր ի պատերազմի»: Ուրիշ ոչինչ:

Իսկ երկրի ներքին քաղաքական կառավարութիւնն Պարսից ձեռքն անցած էր. նոքա զրին Մարզպան մը՝, որ փոխարքայի պաշտօնն ունէր, քայց պարտաւորած չէր թագաւորանիստ քաղաքին մէջ բնակիլ. ո՛չ նախարարեան Հայ այրուածու գունդն, ոչ Հայ Մարզպանն կը կազմէին միացեալ ոյժ մը՝ զիմադրելու պարսկական հալիչ

ձուլիչ ուժին, որով զՀայս յուրացութիւն ստիպէին: Երկրի մը ոյժն անոր հարբս. տութիւնն է, ԱՐՔՈՒՆԻ ԳԱՆՁՆ Է. զայս գիտէր Գեմասթենէս, գիտէին Հոռոմայեցիք, գիտցաւ Նապոլէոն Մեծն. « Աղքատութիւն զայր խոնարհեցուցանէ ». այժմեան բռնաւորներն ալ Պարսից պէս կը վարուին իրենց ստորադրեալներուն հետ — ժամանակներ կը փոխուին, մարդիկ ոչ: Մարզպանը և Նախարարը իրենց «քազատորոքեամբ» և այրուածիով կրնային կուրիլ մարտի դաշտի վրայ փառքով կամ անփառանակ, սակայն Հայաստանի « ԳԱՆՁՆ ՅԱՐՔՈՒՆԻՍ ՊԱՐՍԿԱՅ ԵՐԹԱՅՐ »:

Դիւրին բան չէր Հայաստանի գանձի հաւաքումն, Պարսիկ Մարզպանն կը գրէ, ըստ Փարպեցույն, առ իւր Տէրն. « Որ երթայ աշխարհն Հայոց, աշխարհ մեծ է, զամս երկուս կամ զերիս կացեալ, հազիւ ճանաչէ զեւ և զմտու աշխարհին » և այլն: Վասն զի նախ հարկ էր մանրամասն ազգահամար, աշխարհագիր առնել, ծանօթանալ հարստութեան պարիւրներու հետ, հարկերը դնելու, հասոյթները ճշդելու, ծանրացնելու կամ թեթեւացնելու ըստ հարկին, ելեւմտից հաշուէյարդարութիւնն կազմել և այլն. այս գործին առանձին պաշտօնէութիւն մը կար, որ մեր թագաւորաց ժամանակ Հազարապետութիւն կը կոչուէր. ըստ Հոռոմէականին Praefectus aeraarii: Որպէս « ԱՌԱՅԱՆ ոմն Իշխան, առ որում մտեալ կայր Ս. Մեարովպ, իրրև դոյր արքունական դիւանաց. որով և տէր իւր յայտնի գալ ՎԵՐԱՏԵՍՈՒՅ ԵՒ ՀԱՄԱՐԱԿԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՄՏԻՅ ԵՒ ԵԼԻՑ ՏԱՆՆ ԱՐՔՈՒՆԻ ԵՒ ՊԱՇՏՅՈՒՆԵՑ ՆՈՐԻՆ, ՅԵՄ ԲԱՆՆԱՅՈՂ թագաւորութեանն՝ ԹԷՊԵՏ ՈՅ ԵՍԵՍ ԵՐ ԱՐՔՈՒՆԻ ՏՈՒՆ, այլ բովանդակութիւն ազգին համարէր նոյն, մանաւանդ թէ առաւել ևս կարօտէր Հազարապետութեան. և ահաւաղիկ տեսանի ՎԱՀԱՆ ԱՄԱՏՈՒՆԻ՝ յառաջ քան զպատերազմն Վարդանանց զլուխ կացեալ Հազարապետոյնն հրամանաւ արքային Պարսից »: Ալիշ. Այր. էջ 419.

Մի և նոյն պաշտօնն Հրէից թագաւոր-

1. Յազկերտ հետեւեալ Գարեհ վշտասպանի կարգադրութեան, որ իւր կայրութեան Սատրապութեանց մէջ կ'ուպրակէր մէկ Մարզպան, մէկ Արքունի քարտուպար կամ դպիր և մէկ Զօրավար.

ների մօտ կոչուում էր ԳՊՐԱՊԵՏ ԱՐՔՈՒՆԻ. Յովիդայէ քահանայապետն Տաճարի մէջ հաւաքուած Գանձն Գպարպետի հետ կը հաշուեն և ծրարներ շինած կը բաժնեն արուեստաւորներու վրայ՝. « Եւ եղև իբրև հոտ եթէ բազում (արծաթ և ոսկի կայ) ի տապանակի անդ, ել ԳՊՐԱՊԵՏՆ ԱՐՔՈՒՆԻ և Քահանայն մեծ, և պնդեցին զարծաթն գտեալ ի տան Տեառն » :

Նոյնն և Պարսից տէրութեան մէջ Երկայնաձեռն Արտաշէսի ժամանակ, Համանի և Մուրթթէի կոհնորու մէջ, կը յիշուին կուսակալը և ԱՐՔՈՒՆԻ ԳՊՐԱՊԵՏՔ՝ :

Վերադառնալով վարդանանց ժամանակին, երբ Յազկերտ տեսնելով, թէ քաղցրութեամբ զՀայերը չէ կարող կրօնափոխ ընծի և ձեռք զարկաւ բռնութեան, այն ատեն կը սկսի քաղվովեամբ պարսիկ պաշտօնեաներ ուղարկել Հայաստան : Պաշտօնական լեզուն կը դառնայ Պարսկերէնն և Պաշտօնէութեանց անուններն ևս տիրողի լեզուով կը յորջորջուին, զորս դիւրաւ կարելի է նկատել Եղիշէի և Փարպեցույ մօտ :

Նաև հարկերու, և Էլեմտից դիրով պաշտօնէարիւնև յանձնեց Պարսիկ վերակացուներու, որոց զխաւորն էր Դենշապուհ : Ասոր մասին Եղիշէ կը զրէ. « Եւ յայտ ամենայնի վերայ այլ ևս չարութիւն խորամանկեաց : Չմի ոմն ի հաւատարիմ ծառայից իւրոց ի գործ առաքէր յերկիրն Հայոց, որում անուն էր Դենշապուհ. որ եկեալ հասեալ հրամանաւ արքունի, զողջոյն բերեալ զմեծ թագաւորին, և խաղաղասէր կեղծաւորութեամբ աշխարհայիտ անև՛յ ամենայն երկրին Հայոց ի թողութիւն հարկաց և ի բերևոտրիւն ծանրութեան այր և ձիոյ » : Յետ թուելոյ մի առ մի բոլոր չարիքները, կը յաւելու. « Եւ ևս չարագոյն հինգերորդն. քանզի որ Հազարապետ աշխարհին էր՝ իբրև զՀայր վերա-

կացու համարեալ էր աշխարհականաց քրիստոնէից... և հանեալ զնա ի գործոյն՝ ՓՈՒԱՆԱԿ ՆՈՐԱ ՊԱՐՍԻԿ ԱՐՔԱՆԱՐՀԻՆ » 3... :

Աստի կ'երեւի որ Դենշապուհ առժամանակակից եկած էր Հայաստան Հազարապետութեան պաշտօնով իսկ իւր տեղը կամ վահան Ամատունիի տեղը կը զնէ Պարսիկ մը : Այս Պարսիկը որ այսուհետև պիտի գործէ իբրև Պարսիկ Պաշտօնեայ, պիտի ստիպէ զՀայերն պարսկերէն բարբառով յորջորջել զինքն, որով Հայ Հազարապետն պիտի փոխուի՝ ԵԱՆԻՈՒՐԱՊԵՏԻ, այսինքն որ թարգմանի հայերէն ԱՐՔՈՒՆԻ ԳՊՐԱՊԵՏ :

Իբրև ի հաստատութիւն մեր յայտնած մտքին, կոչումն կ'ընենք Հ. Դեռնդ Տաշեանի հրատարակութեան՝ « Եղիշէի Չորս Յեղանակները հնագոյն գրչագրի մը մէջ » էջ 18 դրուած ծանօթութեան, յորում կը տեսնենք որ չորս ընտրելագոյն օրինակներն ունին Շափուտապետև, ընթերցածը, և կամ Շահուտապետն և կամ ըստ ճիշտ գրութեան հնագիւր մատենից գրելի են Շափուտապետև կամ Շափուտապետն » : Հետևապէս թիրեաքեանն, և մանաւանդ փորթուզալ փաշան փոխանակ կառչելու (Պահլաւ կամ ասորի) խՈՒ բառին, իրենց ուշադրութիւնն դարձուցած ըլլալին համարուն խորի, խուրի, խորն, խուռ բառերու վրայ՝ պիտի ձնանէր իրենց առ մտքի մէջ մեր ակնարկած պարագաներն, և ի նկատի պիտի առնէին քաղաքական պաշտօնական անձանց դիրքն, պաշտօնէութեանց նոր յորջորջումները . Փորթուզախանն պիտի նախընտրէր Շափուտապետ կամ Շափուտապետ ընթերցուածը և մեզի հետ պիտի ստուգագրէր ԱՐՔՈՒՆԻ ԳՊՐԱՊԵՏ. և ոչ թագաւորանիստ քաղաքի քաղաքապետ, Եղիշէի գրած շրջանին, երբ մօտ քսան և հինգ տարիներէ ի վեր բարձուած էր Արշակունեաց թագաւորութիւնն և Պարսիկ արուշաններ կը վառէին Հայաստանի սրտի վրայ :

Ամփոփելով մեր վերև գրածներն կ'ունենանք հետեւեալ եզրակացութիւններն.

Ա. ՍՈՐԱՊԱԼԻՆ, ազաւաղ բառ մը չէ և

1. Գ. Թազ. ԺԲ. 10.
2. Եսթեր Թ. 3.
3. Եղիշէ Բ, էջ 41.
4. Եղիշ. Չորս յեզանակ, էջ 18.

ճիշդ կը նշանակէ ախոռակներն ասպատակ տանին արքային Պարսից :

Բ. Դաւթի որդւոց փայլն առանց նսեմացնելու ԽՈՌԱՊԵՏԸ մարթ է ընդունելու կամ Comes stabuli, Connétable, Գունդաստապլ, ըստ հայտնա ախոռակներ, կամ խուրդակներ, որ է Դպրակներ, դատաւոր, ընթերցող, քահանայ և այլն .

Գ. ՇԱՀԽՈՒՊԵՏ == ՇԱՀԽՈՒՐԱՊԵՏ , Արքունի Դպրակներ, որ սեփականաց Հայոց Հազարագետի պաշտօնն Մարզպանութեան շրջանին :

Հ. Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

ունից, Լիվանանից, Մամուքայից և Զահարմահալի միւս հայաբնակ գիւղերից : Աժմ նրանց ընտանիքները թիւը հասնում է 55ի, 241 շնչով, որի 12ից արական է և 112ը իգական, ընդամենը 241 հոգի : Սրանից 15 տուն թօշնըշին են . պանդխտութեան մէջ գտնուում են չորս հոգի :

Գիւղն սմբողջ վեց դօնգ է, որի չորս մասը պատկանում է Սարդար-Ջանիկին (բախտիարցի Նասիր խանին), իսկ երկու մասը՝ Սօլթուն Կահմա մէտ խանին : Գիւղացիները հողագործ են . նրանք մշակում են հողատէրերի հողերը և բերքի 1/2 մասը տալիս են նրանց : Նաեւ տարեկան վճարում են .

Կովին	2 դրան
Էգ ձիուն	3 »
Ջորուն	3 »
Ուշխարին	10 շալի

Հողի մեծ մասը շրջի է և փոքր մասը դէմի . հերկում են վէցիկով : Տեղական բերքերն են ցորեն, գարի, հալլար, կակոու, կտաւահատ, ոսպ և այլն : Օգտում են « Եահրուլարի » աղբիւրներից, որոնք բոլորում են Քեալլար սարի լանջից և մի փոքրիկ առու կազմելով՝ ոլոր - մուր պտոյտներով զայլս են Ներքին - Քօնարքի արևմտեան կողմը և բաժանում երկու հիւղի, որոնցից մէկը գիւղի արևմտեան կողմից օժակտոյտ հոսելով՝ ոռոգում է հիւսիս - արևմտեան կողմի արտերը, իսկ միւսը ոլորապտոյտ անցնում է դէպի հարաւ և ոռոգում է հարաւ - արևելեան կողմի արտերը :

Գիւղն ունի մի եկեղեցի Ս . Սարգիս անունով, որ կառուցուած է 1895 թիւին . դա բարձր գմբէթով, ցեխաչէն և անպանոց մի եկեղեցի է, որ ունի երկու ձեռագիր անտարան - « Ջրեփոր » և « Ս . Գեղար » : Գրանցից առաջինը արձաթեայ կազմով, բամբակի թղթի վրայ գրած է, հաստափոր մի անտարան է, իսկ երկրորդը նոյնպէս արձաթեայ կազմով, թղթեայ ընտիր մի անտարան է, որի առջևի 15 թիթիւրը զարդարած են ոսկեգօծ նկարներով, որոնք նկարչութեան արևեստի տեսակէտից հետաքրքրական են, որովհետև նկարած են բաւական աղոյ վերը ձիւնով : Նրանց նիւթը վերցրած է քրիստոնէական պատմութիւնից, սկսած Յիսուսի ծնունդից մինչև իսաչելութիւնը :

Գիւղը դպրոց չունի, երեխաները յաճախում են մօտակայ վճրին - Քօնարքի դպրոցը : Գիւղացիները մեծամասնութեամբ խարխափում են խոր սգիտութեան մէջ :

Գիւղում գոյութիւն ունի « Այլալոյս » միութիւնը, որ հիմնւել է 1915 թ . զեկտեմբեր 31ին

ՄՊԱՅԱՆԻ ԶԱՅԱՐՄԱՅԱԼ ԳԱԿԱՐԸ
(Աշխարհագրական - Պատմական ուսումնասիրություն)

(Շար. տես Բազմ. 1924 էջ 68)

4. Ներքին - Քօնարք

Սա փուած է Լիվանեան գիւղի հարաւային կողմը, մէկուկէս վերստ հեռու մի ընդարձակ տարածութեան վրայ և նոյնպէս գտւա հայաբնակ է : Գիւղացիները ստեղծ գիւղի անունը ծագել է պարսկերէն « քօնա - արք » բառից, որ նշանակում է հին շինութիւն, պալատ : Հնուէն գիւղի կից եղել է Քօնարք անունով մի գիւղ, որ բնակելիս են եղել քեաղբերը : Աժմ այդ տեղը աւերակ է և կոչւում է « խարաբդալէ » : Հայերը նրա կից հիմնել են մի նոր գիւղ և անանել Ներքին-Քօնարք, որի արևմտեան, հիւսիսային և հարաւային կողմերը զարդարած են բարդիների և բրդիների տնկարաններով, իսկ արևմտեան կողմը փուած է պօտանքը, ուր գիւղացիները ցանում են վարունգ, դդում, ձմերուկ, քաւ, արևածաղիկ, զետնախնձոր, եգիպտացորեն և այլն :

Գիւղը չբնակաւորած է քառակուսի ցեխաչէն պարսպով և ունի մի դարբաս . բաժանւած է երկու թաղամասի՝ վերին - Բաղան և Յածի - Բաղան : Տները երկյարկանի են և շինած կողք-կողքի, իսկ փողոցները ծուռ ու մուռ են և կեղտոտ :

Հայերի այտեղ հաստատուելը 29 տարեայ պատմութիւն է . եկել են 1891 թիւին, Մամու-